

**Արձանագրություն №6/2012-2013**

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության  
գիտական խորհրդի՝ 2013թ. ապրիլի 18-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկ):  
Նիստը նախագահում էր պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը:

Պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց  
քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում: (Ձեկ.՝ հումանիտար  
մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան,  
բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի անդամ Ս. Վ.  
Ղոչիկյան)
2. 2013/14 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի  
ուսման վարձավճարների չափերի հաստատում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
3. Թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լուսինե Սահակյանի հեղինակային <Համշենը  
անցյալի ու ներկայի խաչմերուկներում> վավերագրական ֆիլմի դիտում:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և  
մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային  
հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ս. Վ. Ղոչիկյանը ներկայացրեցին դոցենտի  
և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդն էր.

	<b>Ազգանուն անուն հայրանուն</b>	<b>Ամբիոնը, պաշտոնը</b>	<b>Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը</b>
1.	Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ	Հոգեբանական գիտությունների թեկնածու /1976/ ԺԹ.00.01-հոգեբանության տեսություն և պատմություն, դոցենտ /1982/
2.	Հովհաննիսյան Վլոդյա Համբարձումի	Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ	Իրավաբանական գիտությունների դոկտոր /2012/ ԺԲ.00.06 – միջազգային իրավունք,

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը	Գիտական աստիճանը, կոչումը /մասնագիտ. շիֆրը/
1.	Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի	դեղագործական քիմիայի ամբ. ասիստենտ	կենսաբ. գիտ. թեկնածու /2010/ ԺԵ.00.01 - դեղագիտություն
2.	Տոնոյան Գագիկ Պետրոսի	տնտեսագիտ. մեջ մաթ. մոդելավորման ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2003/ Ա.01.00 – մաթեմատիկա
3.	Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի	տնտեսագիտ. մեջ մաթ. մոդելավորման ամբ. ասիստենտ	տնտեսագիտ. թեկնածու /2007/ Ը.00.08 – տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում
4.	Սարգսյան Սոնա Հայկի	տնտեսագիտ. մեջ մաթ. մոդելավորման ամբ. ասիստենտ	տնտեսագիտ. թեկնածու /2010/ Ը.00.08 - տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում
5.	Հակոբջանյան Աննա Հովիկի	կառավարման և գործարարության ամբ. ասիստենտ	տնտեսագիտ. թեկնածու /2004/ Ը.00.02 – տնտ., նրա ճյուղերի տնտեսագիտ. և կառավարում
6.	Մարգարյան Արուս Վանիկի	անգլիական բանասիրության ամբ. դասախոս	Ը.02.07 - գերմանական լեզուներ
7.	Ավագյան Նաիրա Մակիչի	անգլիական բանասիրության ամբ. դասախոս	Ը.02.07 - գերմանական լեզուներ

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 61 անդամները: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Հասրաթյան Ռաֆիկ (նախագահ), Սանթրոսյան Սարգիս, Միրզոյան Եզնիկ, Աբրահամյան Անի, Աբգարյան Գևորգ:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուն ընտրվեց փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Աղուզումցյան Ռուբեն Վազգենի	57	4	0
2.	Հովհաննիսյան Վոլոդյա Համբարձումի	54	5	2

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի	60	0	1
2.	Տոնոյան Գագիկ Պետրոսի	58	2	1
3.	Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի	58	2	1
4.	Սարգսյան Սոնա Հայկի	59	1	1
5.	Հակոբջանյան Աննա Հովիկի	57	3	1
6.	Մարգարյան Արուս Վանիկի	55	5	1
7.	Ավագյան Նաիրա Մակիչի	55	5	1

**Արտահայտվեցին.** – պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը, գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տես. ինֆորմ. ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը:

**Որոշեցին.** - 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

**2. Լսեցին.** - 2013/14 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի

ուսման վարձավճարների չափերի հաստատման մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):

Գ. Գևորգյանը ներկայացրեց 2013-14 ուստարվա վարձավճարների չափերի նախագծերը (բակալավրիատ-մագիստրատուրա, օտարերկրյա ուսանողների, ասպիրանտուրա)

**Արտահայտվեցին.** – Արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանը, Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը

Նիստին ներկա 61 անդամներից նախագծին կողմ քվեարկեցին 58 հոգի, դեմ՝ 1 հոգի, ձեռնպահ՝ 2 հոգի:

**Որոշեցին.** – Հաստատել 2013-14 ուստարվա ԵՊՀ ուսման վարձի չափերն ըստ մասնագիտությունների և կուրսերի:

**3. Լսեցին.**- Թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լուսինե Սահակյանի հեղինակային <Համշենը անցյալի ու ներկայի խաչմերուկներում> վավերագրական ֆիլմի մասին: Լ. Սահակյանը համառոտ ներկայացրեց ֆիլմի ստեղծման պատմությունը, անցած ուղին, որից հետո նիստի մասնակիցները դիտեցին ֆիլմը: Շնորհակալության ու խրախուսանքի խոսքերով հանդես եկավ Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

22.04.2013թ.